ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1950 *Общественные науки*

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՎՐԱՑԵՐԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի արխիվում պահվում են շուրջ 600 վրացերեն նամակներ, որոնց մի մասը գրված է Գ. Սունդուկյանի ձեռքով, իսկ մյուս մասը նրա հարազատների՝ մոր, քրոջ, եղբոր, կնոջ և ուրիշների ձեռքով։

Այդ նամակները պարունակում են չափազանց կարևոր տեղեկություններ տաղանդավոր դրամատուրգի կյանքի վաղ շրջանի մասին և խիստ արժեքավոր են։

Այդ առաջին հայացքից սովորական թվացող նամակների էջերում Գ. Սունդուկյանը ցույց է տվել իր փայլուն տաղանդը, իր գեղեցիկ իղձերը, իր հաճախ դառը, բայց ազնիվ զգացումները, իր մտորումները. այս բոլորը նա հաղորդել է իր հարազատներին, երբեմն զայրույթով, իսկ մեծ մասամբ ապագա դրամատուրգին հատուկ օպտիմիզմով։ Այդ նամակները համեմված են սուր դիտողություններով, ժողովրդական թևավոր ասացվածքներով։

Ռ. Սունդուկյանի ձեռքով գրված մոտ երեք հարյուր վրացերեն նամակներից շուրջ 200-ը գրված են Պետերբուրգից և պատկերում են 1846—1850 թ. թ. ուսանող Գ. Սունդուկյանի կյանքը. մնացած նամակները գրված են Դերբենդից, ուր աքսորված էր նա 1851—1857 թ. թ.։

Գ. Սունդուկյանի կյանքը կազմող շղթայի այդ առանձին օղակները պարզ ցույց են տալիս, թե ինչպես նրանց կրողը միշտ ձգտել է մի հիմնական նպատակի՝ լինել ազնիվ բոլոր քայլերում, խարազանել վատը, այլանդակը և ոչնչացնել այն գոնե երգիծանքով, մինչև «ժամանակը կուղղի այն»։[1]

Նա իր անզուգական դիտողությամբ, սուր մտքով ու աչքով, իր ժամանակի ռուսական կուլտուրայի հզոր ազդեցությամբ չէր կարող չտեսնել կյանքի լավն ու վատը, գեղեցիկն ու այլանդակը։

1846 թվին նրան հաջողվում է գնալ Պետերբուրգ ուսանելու, բայց ոչ իր սեփական միջոցներով, այլ պետական ծախսով, որպես կովկասյան սան. հենց այդ պատճառով էլ Գ. Սունդուկյանի մասնագիտությունը որոշվում է անկախ իր կամքից, անկախ իր ընդունակություններից ու հետաքրքրությունից. Գ. Սունդուկյանին մնում էր ընտրել չարիքներից փոքրագույնը։ Հետագայում նրան շատ է մտահոգում ֆակուլտետը փոխելու և, մանավանդ կայսերական ծախսից ազատվելու հարցը, որովհետև «...ի՛նչ խոսք, որ ավելի լավ է իմ հաշվին լինեմ, քան թե վերջում կործանվեմ»։[2] Գ. Սունդուկյանը նույնիսկ գերադասում է առևտրով պարապել, քան թե ցարական պաշտոնյա լինել, միայն թե կարողանա «... որևէ կերպ պետական ծախսից ազատվել»։ Բայց դա այնքան էլ հեշտ չէր Սունդուկյանի համար, որովհետև՝ «...այս բոլորը հազար վեցհարյուր ռուբլի կպահանջի, բայց չգիտեմ, ո՞րտեղից. եթե ինձ հարցնեք, ես ոչ փողը կափսոսեմ, և ոչ էլ այս մի տարին, բայց երբ նայում եմ իմ ընտա-

---

[1] Գրական արխիվ, Գ. Սունդուկյանի ֆոնդ. այս և հաջորդ բոլոր մեջբերումները կատարված են նույն տեղից՝ մեր թարգմանությամբ։

[2] Նույն տեղում, էջ 9 նամակ Ա., 1847 թ. 3/III, № 9։

նիքին, հիշում եմ Ձեզ, ասում եմ՝ ջհաննամը սրանց գլուխը, ի՛նչ ուզում են թող անեն մեզ հետ, և մտածում եմ՝ ի՞նչ հնարեմ, որ ... մի տարի պակաս մնամ ու շուտով մորս ու իմոնց օգնության հասնեմ...»։ Մի այլ տեղ մասնագիտությունը փոխելու առթիվ բացականչում է «...չգիտեմ, փող հնարողին ինչպե՛ս հայհոյեմ»։

Հացի խնդիրը միշտ կանգնած է եղել Գ. Սունդուկյանի առջև. գրեթե չկա նամակ, որտեղ նա չխոսի գրամի պակասության մասին, իր պարտքերի մասին. հաճախ նա մորն է ուղարկում իր բոլոր ծախսերի հաշիվը, որպես գրավական այն բանի, որ ինքը չի շռայլում, թեև այս բոլոր դժվարությունները, երբեմն նույնիսկ գառը բոպեները Գ. Սունդուկյանը շղարշում է գեղեցիկ հումորով, որպեսզի իր հարազատները, մանավանդ սիրելի մայրը, շատ չանհանգստանան։

Իր մոր խրատին, որ շռայլ չծախսի, Գ. Սունդուկյանը պատասխանում է՝ «...Ձեր այդ խոսքերը ծիծաղս են շարժում, մայրիկ ջան, ինչ որ չունեմ, ի՛նչը պետք է ծախսեմ». կամ մի այլ տեղ՝ «...իսկապես, զարմանալի է փողի բանը. ինչքան խնայողաբար ես ծախսում, այնքան շուտ է հալվում գրամը»։

Հազվադեպ, բայց և այնպես հանդիպում ենք նաև հուսահատ տողերի. «Ինչքան էլ ես աշխատում եմ չավ նամակ գրել Ձեզ, որպեսզի ոչ մի բանի համար չանհանգստանաք, գուք հակառակն եք անում... Այնպիսի սրտի եմ, որ ուզում եմ Պետերբուրգն էլ թողնեմ, սովորելն էլ... Ես ի՞նչ երկաթե սիրտ պետք է ունենամ, երբ իմանամ, թե՝ Հռիփսիմեն քեզ ասում է՝ «Մայրիկ ջան, ես ոչինչ չեմ ուզում, միայն թե Գաբրիելին այնտեղ ոչինչ մի պակասեցնի»։[1]

Չնայած այս բոլորին, Գ. Սունդուկյանը համալսարանը ավարտելուց և կանդիդատական դիսերտացիան հանձնելուց հետո էլ չի ցանկանում վերադառնալ Թբիլիսի և տենչում է մուգիստրոսի աստիճան ստանալ. այս ցանկությունը բխում է, ինչպես գրում է նա իր վերջին նամակում, երկու հիմնական պատճառից. նախ՝ որ՝«աստված այս շնորհքը տվել է, ինչո՞ւ չօգտագործեմ» և մեկ էլ այն, որ «... մտածում էի, կգնամ հիմա, ո՞վ գիտե ի՛նչ պաշտոն կտան, կամ ի՞նչ հարգանք կունենամ, մինչև...» կամ՝ «...հանկարծ կուղարկեն Շամախի կամ այնտեղ որևէ պետական պաշտոնատանը կնստեցնեն»։

Ինչպես տեսնում ենք, Գ. Սունդուկյանին չէր գրավում չինովնիկությունը։

Պատահական չէ, որ Դերբենդում եղած ժամանակ նա զբաղվել է նաև շինարարական աշխատանքներով, կազմել է պրոեկտներ, կառուցել է շենքեր, պատրաստել է ժամացույց և այլն, և այլն։ Հետո էլ իր կյանքը նվիրում է հայ թատրոնին, իսկ պաշտոնը պահում է որպես ապրուստի միջոց։

Դեռևս Պետերբուրգի ուսանող Գ. Սունդուկյանի մոտ ընդգծվում է նրա ռեալիզմը. նա կյանքը տեսնում էր այնպես, ինչպես նա կար. թեև Գ. Սունդուկյանը առիթ բաց չի թողնում Պետերբուրգի մասին իր հիացմունքը արտահայտելու, երանի է տալիս իրեն, որ հատկապես Պետերբուրգի ուսանող է, որ «... այն կրթությունը, որ կստանաս Պետերբուրգի համալսարանում, ուրիշ տեղ երազում էլ չես տեսնի», բայց և այնպես ռեալիստ Գ. Սունդուկյանի խորաթափանց աչքը նույն Պետերբուրգում տեսնում է նաև դրամի գերիշխանությունն ու նրանից բխող կյանքի այլանդակությունները՝ հատկապես բարձր խավե-

[1] Ընդգծումը Գ. Սունդուկյանինն է։ Քրոջ համար անհրաժեշտ էր նախապես օժիտ պատրաստել, հակառակ դեպքում չէր կարող ամուսնանալ, իսկ դա իր ժամանակ ամենամեծ դժբախտությունն էր կնոջ համար։

ցում, ուր «... ով լավ է հագնված, հարգանքն էլ նա ունի». կամ «ուր բարևն էլ փողով են գնում»։ Հեռևս ուսանող Գաբրիելը ըմբռնում է ժամանակի լոզունգը՝ «փուղ տու, փառք տամ». և մի՞թե այս մորալը չէ, որ հետագայում դառնում է Գ. Սունդուկյանի ստեղծագործությունների անկյունաքարը, պեպոների ողբերգության աղբյուրը։ Շատ ավելի դառնությամբ է խոսում Գ. Սունդուկյանը հայ բուրժուազիայի մասին, Թբիլիսիի հաստափորների մասին. «... Գուցե թե մի օր էլ գա այն ժամանակը, երբ այդտեղի (Թբիլիսիի) ժողովուրդը ժողովրդի անուն ստանա։ Թե չէ դրանք մարդի՞կ են. միայն անուն ունեն մարդու, իսկ սիրտն ու միտքը վագրի է և ոչ թե մարդու... ինձ ո՞վ կլսի, կասեն, «խիլքեն էլիլ է». նորից եմ ասում, գուցե ժամանակը ուղղի»։

Պարզ է, հետագայում արդեն կյանք մտնելով, Գ. Սունդուկյանը ավելի մոտիկից էր տեսնում կյանքը, և ինչ խոսք, որպես իր ժամանակի ազնիվ ու ակտիվ քաղաքացի չէր կարող անտարբեր իր պաշտոնեությամբ զբաղվել. նա որոշեց թատրոնի միջոցով «ուղղել» կապիտալի ավերածությունները ու այդպիսով մասամբ «փրկել» նրա զոհերին՝ իր սիրելի պեպոներին. չէ՞ որ, ինչպես գրում է նա Պետերբուրգի ռեալիստական թատրոնների մասին դեռևս 1847 թվին. «... թատրոնն էլ մի պրոֆեսոր է, որից շատ բան ենք սովորում»։

Շատ արժեքավոր են Գ. Սունդուկյանի վրացերեն նամակները, որոնք լրացուցիչ նյութ են տալիս նրա ամբողջական, ճշգրիտ ու կենդանի պատկերը կերտելու համար։

Մենք որպես նմուշ բերում ենք այստեղ Պետերբուրգյան վրացերեն նամակներից հինգ նամակ մեր թարգմանությամբ. ըստ որում աշխատել ենք շատ չհեռանալ այդ նամակների առօրյա խոսակցական ոճից։ Վրացերեն տեքստում հաճախ հանդիպող վրացատառ, բայց թբիլիսահայ հայերենով ժողովրդական ասացվածքները կամ իր կողմից գործածված բառերն ու նախադասությունները թողել ենք նույնությամբ՝ առանց թարգմանելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ թարգմանությունը տվել ենք ծանոթության կարգով։ Այդպիսի դեպքերը տեքստում ընդգծված են մեր կողմից։ Կետադրական բոլոր նշանները դրված են մեր կողմից։ Տեքստում երբեմն միտքը լրացնելու համար մեր կողմից ավելացրած բառերը դրել ենք անկյունավոր փակագծի մեջ՝ [ ]։

Մ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ա.

Պետերբուրգ, 1847 թվի մարտի 3-ին. № 9.

Շատ սիրելի և թանկագին[1]
մայրիկ ջան.

Սիրով վիզդ համբուրելով բարևս եմ ուղարկում. նույնպես և իմ սիրելի Միքայելին և Հոիիսիմեին։[2] Այնուհետև, մայրիկ ջան, ես շատ լավ եմ, ուրախ. իմ արևը [վկա], մայրիկ ջան, Հիշտ եմ ասում՝ երանի նրան, ով առանց Պետերբուրգը տեսնելու չի մնա. ինչպես արծաթի կտորը ձգես ոսկեչրում և առանց որևէ ջանքի ծածկվի [ոսկով], այնպես էլ Պետերբուրգը այնպիսի մարդու համար, ում խելքը մի քիչ կտրում է։ Մայրիկ ջան, Ձեզ ճիշտն ասեմ, շատ եմ ցավում, որ Միքայելը այստեղ չէ, բայց այդպես և այդ գիտությամբ այստեղ լինի, ի՞նչ կարող է անել. ի՞նչ ասեմ [նրան], որ սովորել չցանկացավ։ Ո՞վ է ասում, որ նա չինովնիկ դառնա, էլի թող առևտրական[3] լինի, բայց գոնե գիմնազիայի լրիվ կրթությունը ստանա, այստեղ այն պատիվն ու գիտելիքները, որ ունեն առևտրականները, այդտեղ չունեն խորհրդատուներն ու նախագահները։[4] Եթե աստված օգնի և պետական ծախսից որևէ կերպ ազատվեմ, գուցե թե դասընթացը ավարտելուց հետո ինքս էլ այդ արհեստին հետապնդեմ։ Մայրիկ ջան, Միքայելին խնդրում եմ, թե խելք ունի, կրթությանը հետևի, թե չէ հետո կփոշմանի. թող մեկ մտածի, եթե երբևէ մեկ-երկու կանոնավոր մարդկանց խմբի հանդիպի, հո պետք է բերանը բաց մնա։ Բացի այդ, կարճ ժամանակից հետո այդտեղի բոլոր առևտրականները չափազանց կընկնեն. կարծում եմ, դուք էլ գիտեք, որ այդտեղ արտասահմանյան մաքսը թեթևացրին, այդ պատճառով էլ Ձեզ մոտ ապրանքը ավելի էժան կլինի, քան այստեղ, բայց ո՞վ հնարավորություն կտա այդտեղի անխելք առևտրականներին. մեզ մոտ ընկերությունը փակվեց. երկու կամ երեք ամսից հետո Ձետվերիկովը կգա այդտեղ և մի քանի խանութ կբացի. հետո թող գնան Ձեր առևտրականներն ու ձեռքերը կամ ծոցը դնեն և կամ գրպանը ու մանրավաճառներ դառնան. ինչ խոսք, ով կրթված է և գիտե, թե ո՞ր երկրում ի՞նչ է ստացվում, նա առաջինը կգնա կգնի, կբերի ու ուրիշի տակ էլ չի մնա։ Բայց այսպիսի առևտրականներ, կարծում եմ, մերոնցից (Թբիլիսեցիներից) քչերը դուրս կգան. ա՛յ, Միքայել ջան, այս ամենի մասին պետք է մտածես, և եթե խելք ունես, սովորի՛ր ոչ թե արշին բռնելը, այլ գիրք ու գիրք. ինչ որ է, ամենը այդ օրհնած ու անիծած գիրքն է.[5] այլա հիմա եթե դու ինձ նման դասընթացը[6] ավարտած լիներիր (չկարծես թե փքվում եմ),[7] այստեղ մի լավ առևտրականի մոտ կտեղավորեի ու կարճ ժամանակում մարդ կդառնայիր։ Սակայն, Միքայել ջան, դեռ հույս ունեմ քեզանից, որ թշնամու սրտով չես լինի։ Դու այդտեղ աշխատիր, ես՝ այստեղ, գուցե քեզ համար մի բան կարդավորեմ։

Սիրելի մայրիկ ջան, եթե մեր մասին կցանկանաս տեղեկանալ, հետևյալը պետք է ասեմ, մեր կրթությունը դեսպանորդների ուսում է, կոնսուլների կրթություն, սակայն մեզ այդտեղի չինովնիկության համար են պատրաստում, իսկ մենք՝ վեցս, ուրիշ ենք և դժվար կխարեն մեզ. Գիմնազիայում ուրիշ աշակերտներ ենք եղել, համալսարանում էլ ուրիշ ուսանողներ կլինենք։

---

[1] Շատ սիրելի և շատ թանկագին գրելու փոխարեն սխալմամբ դրում է՝ ոչ սիրելի, ոչ թանկագին. հետագայում այդ սխալը ուղղում է։

[2] Ռ. Սունդուկյանի եղբայրն ու քույրը։

[3] Գործ է ածել ռուսերեն купец բառը։

[4] Կիրառված է советник և начальник ռուսերեն բառերը։

[5] Մի այլ նամակում խորհուրդ է տալիս եղբորը լավ ռուսերեն սովորել։

[6] Խոսքը միջնակարգ (գիմնազիայի) կրթության մասին է։

[7] Փքվել, այստեղ նշանակում է հպարտանալ, գոռոզանալ։

[8] Ինքը և իր հետ Պետերբուրգ գնացած հինգ վրացի ընկերները։

երկու անգամ համալսարանի խորհրդին բողոք ներկայացրինք, երկու անգամ էլ կոմիտետին[1] թե՝ «...եթե մեզ չինովնիկության համար ելք պատրաստում, խնդրում ենք բոլորիս փոխադրեք իրավաբանական ֆակուլտետ (որտեղ միայն օրենսդրություն են սովորեցնում), եթե ոչ, այնտեղի չինովնիկների համար ի՞նչ կարիր կա արարերենի, տաճկերենի կամ պարսկերենի»։ Այս խոսքերի վերաբերյալ բոլորը ասացին թե՝ ճիշտ ենք ասում, բայց և ոչինչ չկարգադրեցին։ Մենք, սակայն. նրանց ատամի [մարդ] չենք. եթե չեղավ, այսօր Բուտկովի մոտ էինք (Արղանովը գիտի, թե ով է) և ասացինք, «եթե ոչնչով չեք օգնելու մեզ, մենք այլևս չենք ցանկանում կայսրության հաշվին սովորել և ինչքան ծախսել եք, ե՛տ ստացեք» ինչ խոսք, որ իմ ծախսով սովորեմ, ավելի լավ է, քան թե վերջում կործանվեմ։ Տարվա մեջ երեք հարյուր ռուբլի բավական է, բայց դուք դեռևս մի՛ մոռացվեք փողի համար, գուցե որևէ բան կարգավորենք։ Մի՛ մտածիր, մայրիկ ջան, երեք տարուց հետո Ձեր գրկումն եմ. մայիսի 2-ին քննությունները կսկսվեն և Ձեր աղոթքով, հույս ունեմ[2] շատ այդպիսի մայիսներ եմ տեսել։

Մայրիկ ջան, ինչպես գրել եմ Ձեզ, անցյալ շաբաթ Աննա Գարրիելովնա[ից] ստացա տաս ռուբլի. ընդամենը ունեմ երեսունհինգ ռուբլի, որից երեք ամսվա դաշնամուրի փողը պետք է տամ։ Ութ ռուբլի Մելիքովից եմ պարտք արել. հիմա պետք է զատկի համար սերթուկ և շալվար կարել տամ, բայց այդքան [փող] չունեմ։ Աստված վկա, մայրիկ ջան, այս հագուստով ամաչում եմ, որ դուրս եմ գնում, իսկ ընկերներս էլ ասում են՝ «քանի Գիմնազիայումն էիր, վայելուչ էիր, հիմա այնպես ես քարշ գալիս, կարծես թե ինքդ քեզ ատելի ես դարձել»։

«Աղվեսը պոչը վկա բերեց»։[3] Իսկապես, մայրիկ ջան, այդ պատճառով գրեթե եկեղեցում էլ թաքնվում եմ կամ Բուտկովից կամ Խուդաբաշովներից, թե ինչ է, այնտեղից տուն չտանեն ճաշի։ Այն էլ դիտցեք, որ առավոտից մինչև երեկոյան ժամը 8-ը միշտ պետք է հագնված լինենք. այս մեկ սերթուկը օրվա[4] սերթուկ էլ է և շալվարն էլ։[5]

Ձեր Գաբրիել

Մայրիկ ջան, այսօր Աննա Գարրիելովնայի մոտ էի ճաշի։ Նրա տների ու ճաշի կարոտը չէի, բայց շատ խնդրեցին, ես էլ գնացի, գինի գնեցին, ձկնկիթ բերին, լավ պատվեցին ու քեզ բարև ուղարկեցին։

Ասացին, որ շուտ-շուտ գնամ-գամ «մեր որդին ես»։ Ես էլ գլխով եմ անում[6] ու շնորհակալություն հայտնում (ինչպես Միկոն է անում, երբ մորաքույրը որևէ բան է խնդրում). նրա մոտ ի՞նչը պետք է ինձ վազեցնի, այնքան ժամանակ էլ չունեմ, որ գեներալների հետ շրջեմ։ Երեկ համալսարանում համերգ կար և իսկույն Մենշիկովի(՞)[7] ադյուտանտի հետ ծանոթացա, հո գիտե՞ք, այսպիսի բաներում ուրիշ [տիսակ] աստղ ունեմ։ Սիրով բարևեք պապին, մորաքրոջը, Ղազարին, Յագորին, Թոմկային, Միկոյին, Թինային, Բասիկելին, Անգրեին, Բազարի(կիկե)կելային, տեր Օհանեսին բարևեք ձեռքը խնդրելով։

Մայրիկ ջան, դաշնամուրից բացի, հունվարի 13-ից մինչև այսօր մարտի 2-ը ութ ռուբլի և 50 կոպեկն է ջրի ջանն ու փարը։[8]

Մայրիկ ջան, թատրոն գնալն արգելում եք. նախ որ ամսվա մեջ շատ գնամ, երեք կամ չորս անգամ և երկրորդն էլ՝ որ թատրոնը Ժանպոլի Կոմեդիան չկարծեք, կամ թե չէ այդտեղի թատրոնները. թատրոնն էլ մի պրոֆեսոր է, որից շատ բան ենք սովորում։

Մանապրություններ. – Մայրիկ ջան, դրեք, թե մեր ռուս բնակչի ժամանակը չլրացա՞վ կամ իր պարտքի դիմաց հաշիվը ինչպե՞ս մաքրեց։[9]

---

1 Բնագրում կոմիթեե բառը ջնջված է և ծանոթության կարգով էջատակը գրված՝ ռազմական մինիստրի գրասենյակին։

2 Ուզում է ասել. «հույս ունեմ, որ քննությունները հաջող անցնեն»։

3 Ավելացված է տողի վերևից։

4 Ցերեկվա իմաստով։

5 Նախադասություն անավարտ է. ուզում է ասել, թե այդ սերթուկն ու շալվարը իր միակ հագուստն է, որ հագնում է բոլոր դեպքերում։

6 Իրր համաձայնության նշան։

7 Մենշիկովը մինիստրի չափ ձայն ունի, իսկ ինքը ծովակալ է (ծանոթ. Սունդուկյանինն է Մ. Իսր.)։

8 Նշանակում է՝ գրպանի ողջ ուժն ու ճոխությունը. բնագրում գրված է վրացերեն տառերով, բացի վերջին ր տառից, որ վրացերենը չունի։

9 Առաջին էջի ցածի եզրին մանր գրված երկու տող։

Թալիկոյին, նրա մոլը, տատին, քույրերին բարևեք. Թալիկոյին ասացեք ողջություն, ողջություն։[1]

Ձեր փետրվարի 10-ին գրած նամակը ստացա անցյալ ամսի 25-ին։[2]

Ռ.

Պետերբուրգ, 1847 թվի ապրիլի 4-ին, № 13.

Շատ սիրելի և բանկացին մայրիկ ջան.

Ներեցեք, որ այսքան ժամանակում կարգին նամակ չկարողացա գրել, բայց գիտցեք, որ մարտի 28 (№ 12)-ին մի փոքրիկ գրություն Սարաջովի նամակի հետ ուղարկեցի և, բացի դրանից, մարտի 31-ին էլ մի երկտող Ֆինամձղվարովի նամակով ուղարկեցի։

Մայրիկ ջան, իմ մասին եթե հարցնեք, փառք աստծու, լավ եմ և ուրախ. մեջքիս ցավն էլ գրեթե անցավ. միայն այն ժամանակ է ցավում, երբ երկար գլուխս կախ տխուր նստում եմ։ այսպես. ինչ խոսք, ով էլ լինի, նրանն էլ կցավի. բժշկից սակայն այն դեղն ունեմ, որ ոտքով շատ ման գամ. սա էլ, մայրիկ ջան, գրպանի խնայողություն է, սրան կսազի, որ ասենք՝ համ ջանին շան է. համ՝ ջիբին։[3]

Մայրիկ ջան, շուտով մեզ մոտ բնությունները կսկսեն և դրա համար էլ, խնդրում եմ, որ ներեք ու չանհանգստանաք, եթե մինչև հունիս անկանոն գրեմ։

Մայրիկ ջան, երեկ չէ. առաջին օրը սերթուկի ու շալվարի չափը վերցնել տվի. այդ բոլորի համար դերձակի հետ պայմանավորվեցինք 11.500։ ռուբլի։ Մայրիկ ջան, լավ գիտեմ, որ կասեք թե՝ «էն տղեն ի՞նչ է գժվի». չէ, մայրիկ ջան, այդպես չէ. հենց այդ պատճառով էլ ինքս այսքան ժամանակ չէի կարել տալիս, բայց այլևս հնար չկար։ Մենք այդտեղ ասում էինք՝ «Օխտ մանեթ ձեռնամուգդ ի՞նչ խաբար է»։[5] Հիմա այստեղ պետք է ասենք, թե՝ «տասն ու օխտ մանեթ ձեռնամուգդ ի՞նչ իսարար է»։ Ճիշտ է, կարելուն էլ ի՞նչ գովք է ուզում, բայց ես նրանց համար տասնուոխտ մանեթ չունեի (սրանք այնպիսի դերձակներ են, որ նրանց կանայք կառքերով են ման գալիս)։ Այս ու այն կողմ ընկա, մեկ տաս ռուբլիանոց դերձակ գտա. ճիշտ է, սա նրանց նման չի կարող կարել, բայց, ինչ անեմ, այս անգամ այսպես լինի, իսկ հետո, թե կենդանություն կլինի, տասնուոխտ ռուբլիանոցներին կարել կտամ։ Սա իսկապես այն է ստացվում, որ՝ կատուն երշիկին չհասավ ու ասաց՝ այսօր ուրբաթ է Ղպաս էղ։ Դավրիշովին ասացեք, որ երբ կգամ, հենց առաջինը իրեն կարել կտամ հագուստեղենս ու վարձը տաս ռուբլի կվճարեմ։ Իմ սերթուկի ծախսը այս է. երեք արշին մահուդին՝ 36 ռուբլի, մեկ արշին և 3/4 տրիկոյին շալվարի համար՝ 28 ռուբլի (մայրիկ ջան, շատ չթվա. այստեղ տրիկոներ կան, որոնց միայն արշինը 35 ռուբլի է). կարելու վարձը և մնացած մանր-մունը բաներին[6] 45 ռուբլի տվեցի. ժիլետկան առայժմ մնաց։

Մայրիկ ջան, մեծ մարդկանց հետ ծանոթացա և չգիտեի, որ դրա համար մեծ փողեր կըպահանջվի. այստեղ ով լավ է հագնված, հարգանքն էլ նա է վայելում. ահա ժամացույց գնելու ցանկություն էլ ունեմ, բայց չգիտեմ թե՝ «վուր ծառն իս բուփ տալի»։[7] Ապա ինչպես կլինի, որ այսպիսի մարդկանց մոտ ուսանողը այնպես չգնա. որ գլուխը օծանելիքով չբուրի ու թաշկինակը՝ դուխիով. հագուստը առաջնակարգ դերձակի կարած չլինի. նոր մոդայի ժամացույցը ծոցագրպանից չհանի ու ոսկե շղթան կոճակների հետ չվառվռա. միշտ մաքուր ձեռնոցներ հագած չունենա։ Այս դեռ բոլորը չէ. կարճ ժամանակից հետո սեղան կրացեն առջևդ. «ապա, ցանկալի՞ է թղթախաղ»[8] (այս խոսքի համար ես շատ անգամ եմ կարմրել), պետք է հինգ

---

1 Վերջին էջի վերևից, տեքստին հակառակ ուղղությամբ։

2 Առաջին էջի վերին եզրին։

3 Ե՛վ մարմնին է օգուտ, և՛ գրպանին։

4 Թիվը կատակով չափազանցված է և գրված է վրացական տառերով (ჩრნ)՝ սկզբից թուման (ჯ) նշանով, այսինքն՝ 1150 թուման։

5 Ցոթ (տասնյոթ) ռուբլի վարձատրություն, ինչ խարար է, շատ—շատ է։

6 Կիրառված է կիլյականտուրներ բարբառային բառը, որ մոտավորապես նշանակում է՝ զանազան օյինբազություններ։

7 Այսինքն թե՝ ինչ միջոցներից։

8 Գրված է վրացերեն տառերով՝ ռուսերեն՝ „а ну, угодно-ли вкарти?".

ռուբլու չափ կամ շանես, կամ տանուլ տաս. ի՞նչ խաբար է... ոչ մի բան, ժամանակ են անցկացնում: Բացի սրանից ինչպե՞ս կարելի է, որ ուսանողը լավ պարել չիմանա. բացի դրանից մեկ էլ տեսար կասեն. «Վաղը կամ մյուս օրը գնում ենք պարահանդես կամ ճավաքույթ, դուք էլ ուսանեցեք...». օ ո օ՜, ամոթ չէ՞, որ ուսանողն ասի՝ չեմ կարող. չի լինի, մեկ-երկու ռուբլի էլ սրա համար կգնա: Ահա, մայրիկ ջան, այստեղի կյանքը. *այս տողերը ընդգծեցի այն պատճառով, որ յուրաքանչյուրի բերանից այս է դուրս գալիս։ Ես առաջ էլ գրել եմ ու հիմա էլ [գրում եմ]. մտածե՛ք, մայրիկ ջան, եթե այսպիսի դեպքեր պատահեն, ի՞նչ անեմ, կամ ի՞նչ կլիներ իմ վիճակը, եթե ասեի թե՝ ես թուղթ չեմ խաղում. հո չեն ասում՝ «Սա ինչ լավ բան է անում, որ չի խաղում, իր գործին ուշադիր կլինի», հենց իսկույն ծիծաղում են ու ասում թե՝ էշ մարդ է, կամ թե չէ ասում են. «Եթե կարողություն չուներ, մեզ նման մարդկանց ինչո՞ւ է ճանաչումս։ Ի՞նչ եք ուզում, ուսանողը այնպես է այստեղ ընդունված, ինչպես պաշտոնյա։ Շատ անգամ այնպես կպատահի, որ թագավորն ու ուսանողը միևնույն պարահանդեսում կլինեն։ Այս բոլորը փողի գործերն են։* Փուղ տու, փառ տամ:

Մայրիկ ջան, սիրով բարևեք պապին, Թոմկային, Յագորին, Ղազոյին, Միկոյին, մորաքրոջը, Թինային, Անդրեյին, Բասիկելին, Ազարիային. նմանապես՝ Բարբարե հարսին,[1] *Թաքո հարսին, Յագոր փեսային, հորեղբորը, աղջիկ Մարթային, նրա կեկելին ու Մարիկոյին, Հակոբ, Արտեմ և Միքայել Իվանիշներին նաև Դավիթ հորեղբայրենց և Կարապետ ու Գիորգի Դավիդովիշներին. Քարտաշանց, հորաքույրանց Հովնան քեռուն ու Մագդային, Սոֆյա հարսին, Թաթել հարսին, Մարթա հարսին և բոլորին. նաև բժիշկ աղային, Զորաբյաններին. հավատացե՛ք ժամանակ չունեմ, որ բոլորի անունները մեկ առ մեկ գրեմ, միայն խնդրում եմ, որ դուք մեկ առ մեկ իմ կողմից բարևեք։* [Բարևեք], *նաև Թամշա քեռիենց (Միքայել ջան, իմ փոխարեն Մելքոն քեռու վզին պինդ փաթաթվիր ու մի լավ համբուրիր. նույնպես և Սոֆյա հարսին ձեռքը համբուրելով բարևիր։ Մելքո Ստեփանիչ, աստված վկա, որ այս տողերը գրելիս աչքերս արցունքով լցվեցին. թե ինձ սիրում եք, շուտ-շուտ մեր տուն գնալ-գալ ունեցեք և ինձ Ձեր նամակին արժանի դարձրեք ու Ձեր մասին հայտնեցեք. հետո ես էլ կգրեմ և կհայտնեմ թե Ձեզ ինչքան եմ սիրում ու կտեսնեք, որ իմ նկատմամբ ունեցած Ձեր հոգատարությունը չեմ մոռացել. Ձեր փոքր և իսոնարհ եղբայր Գաբրիել Սունդուկով)։*

Այնուհետև, մայրիկ ջան, դերձակ Ոհանին և Յասոյին սիրով կբարևեք. Յասոյին ասեք թե ինչո՞ւ մի փոքրիկ նամակ չի գրում. այժմ ցտեսություն մինչև երկրորդ նամակը և, եթե սիրում եք, գոնե շաբաթը կամ տաս օրը մեկ՝ նամակ գրեցեք։

Ձեր խոնարհ որդի Գաբրիել Սունդուկով-

Մակագրություն.— *Սողոմոնը զայրացած է ինձ վրա. նամակ եմ գրում, բայց պատասխան չի գրում. մի այդտեղից գոնե հայտնեցեք նրա մասին. Ստեփանին և Նիկիչին մյուս շաբաթ կգրեմ։*[3]

Գ.

Պետերբուրգ, 1847 թվի ապրիլի 11-ին, № 15.

Ուրբաթ օրն եմ գրում

Շատ սիրելի և թանկագին մայրիկ ջան.

Զատիկ օրը գրած ձեր նամակը ստացա այս ամսի 9-ին. զատիկը շնորհավորելու համար շնորհակալություն եմ հայտնում. նույնպես և Միքայելին ու Հռիփսիմեին և բոլոր նրանց, ում անունը գրած էր ձեր նամակում, իսկ երկուսին՝ տեր Օհանեսին և տեր Սահակին, հատուկ շնորհակալությունս եմ հայտնում. նրանց պատարագի շնորհը լինի ձեզ օգնական և ձեր որդիներին, ձեր եղբայրներին, ձեր սիրելիներին ու բարեկամներին և բոլորին՝ խաղաղություն ամենեցուն: *Ի՞նչ անեմ, Յագոր Զախարիչը այստեղ պետք է լինի, որ լավ օրհնի ձեզ։*

Մայրիկ ջան, երբ ես լուրջ նամակ եմ գրում իմ գործի կամ ուման մասին, խնդրում եմ պատասխանը շուտ ուղարկեք ու կանոնավոր պատասխան գրեք և ոչ թե ասեք՝ «ձեր մարտի

---

[1] Զայլո թարգմանում ենք եարս բառով։ Նշանակում է հորեղբոր կին, բայց այդպես կոչում նաև եղբոր կնոջը, քեռու կնոջը և այլն։

[2] *Այս նամակի 3-րդ թերթիկի վերջին էջը ուղղված է քրոջը՝ Հռիփսիմեին, որ այստեղ չենք բերում։*

[3] *Նամակի առաջին էջի վերին ձախ անկյունում։*

3-ին գրած նամակը ստացա. շատ բան էիր գրել, բայց չգիտեմ, ինչ գրեմ. որոշեցի, որ լեզուներից հրաժարվես և կայսերական ծախսով օրենքները սովորես»:[1] Շատ լավ նք ասում, մայրիկ ջան, բայց ինձ չեն թողնի, որ լեզուներից գլուխս ազատեմ և ուրիշ ֆակուլտետ տեղափոխվեմ։ Ես այժմ ձեզանից լավ գիտեմ ու ամեն ինչ տեսնում եմ, թե ո՞րն է լավը և ո՞րը վատը, բայց փող հնարողին, չգիտեմ, ինչպես հայհոյեմ։ Արշանովը հո իզուր չէր ասում, թե՝ «դու քո ծախսով գնա, ավելի լավ է». նրա խոսքը երբեք իզուր չի եղել։ Հիմա, մայրիկ ջան, եթե ուրիշ ֆակուլտետ տեղավորվեմ, նախ այս, որ ինչքան ինձ վրա ծախսել են, ետ կպահանջեն, երկրորդ, պետք է այս տարին կորցնեմ, որովհետև ուրիշ ֆակուլտետում նորից առաջին կուրսից պետք է սկսեմ, բացի դրանից, տարվա մեջ երեք հարյուր ռուբլի հազիվ կրավարարի. այս բոլորը մոտ հազար վեցհարյուր ռուբլի կնստի ու չգիտեմ, թե որտեղի՞ց. թե իմ խելքին ես ճարցնում, ես ոչ փողը կափսոսեմ, ոչ էլ այս մի տարին, բայց երբ իմ ընտանիքին եմ նայում ու ձեզ եմ հիշում,[2] ասում եմ. ջհաննամը սրանց գլուխը, ինչ ուզում են թող անեն մեզ հետ ու մտածում եմ, թե ի՞նչ հնարեմ, որ ինչքան էլ այստեղ պետք է լինեմ, նրանից մեկ տարի պակաս մնամ և շուտ մորս ու հարազատներիս օգնության հասնեմ, և կամ՝ ի՞նչ հնարեմ, տարվա մեջ, պետական ծախսից բացի, որ ես հարյուրհիսուն—հարյուրութսուն ռուբլի եմ ծախսում, որևէ կերպ հիսուն ռուբլիով անցկացնեմ։ Մայրիկ ջան, ահա իմ մտորումները, բայց ի՞նչ անեմ. ո՞վ կլինի այն խելագարը, որ մի երկու հազար ռուբլի կապի ու ինձ տա. ես էլ իմ հետաքրքրության ետևից ընկնեմ և ոչ թե ուժով բան սովորեմ։ Իմ վիճակը այնպես է, ինչպես որ գետի ճանապարհը Շադինյանների քարվանսարայի մոտ կապեն ու ասեն, թե՝ «հիմա Մախաթի կողմը ուղևորվիր»։ Դուք էլ լավ գիտեք, թե ես երկրաչափությունն ու ՀԽՈՐԿԵԴԼՈՕԱ-ն այս ՈՍՈՐԿԵԴԼՈՕԱ-ն ամեն մարդու գործ չէ, իսկ ինձ համար հենց ՀԽՈՐԿԵԴԼՈԾԱ-ն է։)[3] ինչպես եմ սիրում և գիտեմ, որ այդ ֆակուլտետում շատ առաջ կգնայի, բայց, ի՞նչ անեմ, ես էլ գետի նման պետք է Մախաթի կողմը ուղղեմ ճանապարհս։

Մայրիկ ջան, Անդրոնիկովին այդ նամակը ձեզ մոտ կարդացնել տվեք և կհասկանաք մեր վիճակը։

Սիրով բարևեք պապին, տեր Օհաննեսին, մորաքրոջը, Յագորին, Ղազո և Միկիտ Զախարովիչներին, Թինային, Բասիկելին, Անդրեին, Մելքո Ստեփանիչին և հարսներին՝ Թաքու և Սալոմե հարսներին առանձին, Թասթելա և Մարթա հարսներին առանձին, Բարբարե և նրանց հարսներին առանձին, երկու Սոֆյա հարսներին էլ առանձին. այս ինչպես հարսները չորս գծով են գալիս իմ սրտում...[4] սրանից հետո որ գրեմ չորս տեսակ հարսներին բարևեք, դուք հասկացեք։

Սիրով համբուրեք Միքայելին և Հռիփսիմեին. Միքայել ջան, խանութին ուշադիր եղիր և մտքումդ լավ անգիր արա, թե մի բան մի ժամանակ ինչպես վաճառվեց ու մի ուրիշ անգամ՝ ինչպես, կամ օգուտը ինչ էր, կամ՝ ես ինչ գիտեմ, դու ես խանութում, քո գործը գու ավելի լավ պետք է իմանաս. ուրիշներին մի հետևիր։ Գործի ժամանակ գործիդ զգաստ կաց, իսկ քեֆի ժամանակ էլ լավ քեֆ արա։ Մայրիկ ջան, այդպես էլ սիրով բարևեք բոլոր բարեկամներին, բոլորին մեկ առ մեկ. նաև Յասոյին։

Մայրիկ ջան, երեկ (հինգշաբթի) առավոտյան երազումս այդտեղ էի, իրը զատիկ էր ու թնդանոթների ձայն էի լսում. աչքերս բացեցի (ժամը 5-ը կլիներ), տեսա վոր համալսարանը թնդանոթների ձայնից սասանվում է. հետո, առավոտը իմացա, որ ժառանգորդը տղա է ունեցել... այս էլ ձեզ նոր լուր...

Եթե ցանկանում եք այստեղի եղանակի մասին իմանալ, տաք օրեր են սկսել, ցերեկը շատ

---

[1] Ընդգծումը Դ. Սունդուկյանինն է. —Մ. Ռսր.։

[2] Ընդգծումը Դ. Սունդուկյանինն է.—Մ. Ռսր.։

[3] ՀԽՈՐԿԵԴԼՈԾԱ (չխիրկեդլորա)=պատը բարակ փայտե ճաղով փորփրել, որ փոխաբերական իմաստով սովորաբար նշանակում է՝ «պարապ վախտի խաղալիք», այսինքն, դրականությամբ դրաղվել, բայց այստեղ, մեր կարծիքով, այդ իմաստը չունի. պետք է իր բովանդակությամբ մոտ լինի երկրաչափությանը։ Անշուշտ պատահական չէ, որ հետագայում Դ. Սունդուկյանը, Դերբենդում պաշտոնավարելիս, դրաղվել է նաև ճարտարապետական գործերով։

[4] Ոչ միայն չորս ճյուղով, այլև չորս գծով—նախ դրում է վերջին (4-րդ) էջի կեսին, ապա տողի վերևից գծով շարունակում է 1-ին էջի եզրին, որտեղից անցնում է վերջին էջի վերին եզրին, տեքստին հակառակ ուղղությամբ. հետո (4-րդ գիծ) շարունակում է 1-ին էջի ցածր եզրին։

է երկարել, այնպես որ արևը ելնում է առավոտվա ժամը 4-ին և մայր է մտնում երեկոյան ժամը 8-ին, բայց Նեվայի վրա սառույցը դեռ անշարժ կանգնած է։ Այժմ ցտեսություն, մայրիկ ջան, մի վիզդ տուր, որ ամուր համբուրեմ. Միքայել և Հռիփսիմե ջան, դուք կատարեք իմ փոխարեն։

Ձեր Գաբրիել Սունդուկյան

Մակագրություններ.— Այս նամակը լավ երկու-երեք անգամ կարդացե՛ք, և իմացե՛ք թե ինձ համար ի՞նչն է անհրաժեշտ։[1]

Պատասխանը շուտ գրեք։[2]

Իմ ընկերները շնորհակալություն են հայտնում բարևելու և զատիկը շնորհավորելու համար և սիրով բարևում են ձեզ. նույնպես և Ղազոյին և Միխակին։[3]

Դ.

Պետերբուրգ, 1847 թվի նոյեմբերի 28-ին, № 46

Սիրելի մայրիկ ջան.

Նախ ընդունեք սիրով՝ վիզդ ու կուրծքդ համբուրելով բարևներս, ինչպես և իմ սիրելի Միքայելին ու Հռիփսիմեին աչքերը համբուրելով բարևներ եմ ուղարկում։ Մայրիկ ջան, ստացա ձեր այս ամսվա 10-ի նամակը և տաս ռուբլին։ Մայրիկ ջան, և՛ փող եք ուղարկում, և՛ գրում եք, թե՝ այս ու այն կարիքն ունեք ու ետ չմտածեմ. ա՛խ, մայրիկ ջան, մի ասեք թե մտածելով ի՞նչ կօգնեմ. իմ օգնությունն այն կլինի, որ այս երկու և կես տարում դասընթացը ավարտեմ ու գամ։ Մայրիկ ջան, ես լավ եմ հասկանում ձեր վիճակը. ես գիտեմ, որ դուք շատ բան եք պակասեցնում ձեզ, իսկ ինձ ոչինչ չեք խնայում. ես գիտեմ... բայց ի՞նչ անեմ, մայրիկ ջան, ինչպես էլ լինի, այս երկու և կես տարին յոլա տարեք և աստված ողորմած է. հույս ունեմ աստծուց, որ դուք կտուեք, թե՝ փառք աստծու, իմ խնամքը Գաբրիելի նկատմամբ չկորավ։ Միքայելն էլ լավ մարդ դուրս կգա. իմացեք, որ ով իր գործին ուշադիր է, նրան աստված չի կորցնի։ Փառք աստծու, որ այն փորձանքից այնպես ազատվել է։ Նզովված Միրզոնը[4] չի՞ ամաչում, որ ստիպում է այդպիսի գործեր կատարել. միթե՞ Միքայելի հետ էլ այնպես պետք է վարվի, ինչպես ուրիշների. աստծու ամոթա՛նքը նրան, աստծու ամոթա՛նքը... ահա, մայրիկ ջան, այդ են մեր հայերը. ա՛խ, սիրտս շատ բանով է լիքը, բայց ում ի՞նչ ճար կանեմ. ժամանակը ամենից լավ դեղն է, գուցե թե մի օր էլ գա այն ժամանակը, երբ այդտեղի ժողովուրդը ժողովրդի անուն ստանա, թե չէ դրանք մարդի՞կ են. միայն անունն ունեն մարդու, իսկ սիրտն ու միտքը վագրի է և ոչ թե մարդու. օրինակ. ո՛ր մեկը դուրս կգա այդտեղի հաստափորներից, որ տեսնի ուրիշին կարիքի մեջ ու օգնի. իսկույն կասի՝ «տո, նա իմ բիձա չէ ու բիձու վուրքի, ես ի՞նչ բան ունիմ»։ Միթե՞ ավետարանը այս է սովորեցնում. է՛հ, մայրիկ ջան, ի՞նչ գրեմ, տաս թաբախ թուղթն էլ հերիք չէ ինձ, կամ ինձ ո՞վ կլսի, կասեն՝ «խիլֆեն էլիլ է»։ Նորից եմ ասում. գուցե ժամանակը ուղղի։[5]

Մայրիկ ջան, երեկ Ռեյի մոտ էի թեյի, շատ խնդրեց, որ այդտեղի ղանաուզի[6] և մովի[7] նմուշներ ձեզ հանձնարարեմ և այդ պատճառով էլ, մայրիկ ջան, խնդրում եմ, որ մի քանի ղանաուզի և մովի նմուշներ ուղարկեք հենց այս նամակի։ պատասխանում. ոչ շատ պայծառ գույնի, ոչ էլ՝ շատ մուգ, մանր վանդակավոր և նեղ գծավոր. ինքը Ռեյն ասաց, որ սրանք գտնվում են Ղալամքարովի ու Ղուբալովի խանութներում. գինն էլ ճիշտ ու մանրամասն կգրեք, ինքը թեև ասաց, որ արշինը հիսուն կոպեկով է գնել։ Եթե Ղալամքարովին ասեք նրա անունը,

---

1 Նամակի առաջին էջի վերևում՝ կենտրոնում։

2 Առաջին էջի վերին եզրին։

3 Երկրորդ և երրորդ էջերի ցածի եզրերին։

4 Թբիլիսիի հայտնի հարուստներից, որի մոտ աշակերտ է եղել Գ. Սունդուկյանի եղբայրը՝ Միքայելը։

5 Այս և հաջորդ պարբերության միջև Գ. Սունդուկյանը հորիզոնական դիրքով քաշել է մի մեծ ու հաստ գիծ։

6 Մետաքսե գործվածք, կանացի հագուստեղենի համար։

7 Մետաքսե գործվածք, շապիկների համար։

նա [Ղալամքարովը] գիտի, թե ինքը [Ինչը] ինչ գույն է սիրում։ Հօգուտ մատաղ, մայրիկ ջան. կատարեցեք այս խնդիրը, որ այդ մարդու մոտ չամաչեմ. աշխարհը մեկը մյուսով է. ո՞վ գիտե, ինչպես պետք կգա այդտեղ.....[1] տեղ ուներ, իսկ այստեղ ավելի մեծ պաշտոն ունի. ինքը թագավորին երես առ երես ճանաչում է։ Դուք փող չեք ծախսի, նմուշները կուղարկեք, փող կտա և կուղարկեմ ձեզ. շատ լավ մարդ է, իմ արեր, այնպես է հետս վարվում, որ ավելի լավ չի կարող լինել. երեկ ասաց, թե՝ «մյուս կիրակի նամակ կգրեմ համալսարան ու ճաշին եկ ինձ մոտ». ես էլ Միքայելին խնդրում եմ, որ նրա և իմ փոխարեն տիկին Լարիսելին բարևի։ Մայրիկ ջան, սիրով բարևեք պապին, տեր Օհաննեսին, մորաքրոջը, Յագորին, Ղազոյին, Միկոյին, Թոմկային, Գիորգուն, Թինային, հորաքրոջանց Յովանին, Մելքո Ստեփանիչին և բոլոր մյուսներին։ Ողորմած լինի Թելեթի սուրբ Գևորգը և Միրանաուրի աստվածածինը, նրանց զորությունը լինի ձեզ հովանավոր։ Ես էլ շնորհակալություն եմ հայտնում, որ ծնունդս շնորհավորում եք, ցտեսություն, մայրիկ ջան, Միքայել ջան, ու Հռիփսիմե ջան, մինչև երկրորդ փոստը։

Ձեր խոնարհ Գաբրիել

Մակագրություն.— Բարևում են ընկերներս։[2]

Ե.

Պետերբուրգ, 1850 թվի հունիսի 16-ին.

Իմ հոգի ու միտ
մայրիկ ջան,

Այսօր ես ձեզ նամակ գրել չէի ուզում, որովհետև պետք է դիսերտացիան հանձնեմ, բայց, մայրիկ ջան, ինչ որ այսօր վատ տրամադրության եմ և դրա համար էլ ցանկացա ձեզ հետ մի երկու ժամ խոսել։ Իրոք որ, մայրիկ ջան, հոգեկան այսպիսի վիճակում ես ուրիշ երջանկություն չունեմ, բացի այն, որ իմ ժամանակը ձեզ նվիրեմ։

Մայրիկ ջան, միայն այսօր չէ, որ այս տրամադրության եմ. հենց որ քննությունները վերջացրի, մի տեսակ թուլացա, ինքս իմ աչքում դարձա ոչնչություն։ Ես կարծում էի, եթե համալսարանի դասընթացը ավարտեմ, չափազանց ուրախ կլինեմ, բայց այժմ բնավ ուրախ չեմ. մայրիկ ջան, ինչո՞ւ է մարդու աչքը անկուշտ. հիշում եմ, մայրիկ ջան, այն ժամանակը, երբ (հենց որ գիմնազիայում լավ սովորել սկսեցի) անկողնում մեջքիս վրա պառկում էի ու գլխիս վերևի պատուհանի դուռը ձեռքիս խաղացնում ու մտածում թե՝ «Ա՜խ, այն ի՞նչ օր կլինի, որ գիմնազիայի դասընթացը պատվանիշով ավարտեմ։ Հասա այդ օրվան. աչքս ագահացավ. համալսարանը տեսա, ասացի՝ «Այն ի՞նչ օր կլինի որպես իսկական ուսանող գոնե համալսարանը ավարտեմ։ Եկա համալսարան, հասա 3-րդ կուրս, այնտեղ նկատեցի իմ կարողությունը, մտածեցի՝ ավելին կարող եմ ու սկսեցի կանդիդատության ձգտումով սովորել։ Այժմ, մայրիկ ջան, սրան էլ հասա. իմ սրտի այսքան ժամանակ փայփայած տենչանքս բոլորովին մոռացա, բոլորովին մարեց։ Ինձ թվում է, թե երբեք սրտով որևէ բան չեմ ցանկացել. ասում եմ՝ թեկնածությունն ի՞նչ է, չէ՞ որ բոլորն էլ թեկնածու են դառնում և, ուրեմն, ինձ համար առանձին մի անուն չէ թե Սունդուկովը թեկնածու է։ Հետևյալ կերպ էի մտածում, թե Ծինամծղվարովը հո այստեղ է մնում. ես էլ կմնամ, ընկեր կունենամ և մեկ տարում մագիստրոսության համար քննություն կտամ. իսկ այս մտքի վրա, մայրիկ ջան, գող է անցնում մարմնովս, ինչպես անցյալ տարի, կամ՝ էլ ի՞նչ անցյալ տարի, ինչպես չորս ամիս առաջ ցնցվում էի թեկնածուականի համար։ Հիմա մտածում եմ՝ այն ի՞նչ օր կլինի, որ մագիստրոսության քննությունը հանձնեմ համալսարանի դահլիճում երկու հազար մարդու ներկայությամբ, որոնք միայն իմ պատճառով պիտի գան թե՝ այսօր մի թեկնածու պետք է մագիստրոսական դիսերտացիա պաշտպանի. այս 2000 մարդու առջև, մտածում եմ, պետք է հայտնեն թե՝ այս և այս Սունդուկովը, այսինչ ժամանակ Ջրրպետի մոտ է սովորել, այս ինչ ժամանակ գիմնազիայից պետական ծախսով առաջին թեկնածության համար է ուղարկվել, այսինչ ժամանակ համալսարանում հաջող ավարտել է թեկնածուական դասընթացը. այս տարի ամբողջ համալսարանի պրոֆեսորների մոտ մագիստրոսության քննություն է հանձնել և այժմ պաշտպանելու է դիսեր-

[1] Բառն անհասկանալի է, պարզ չէ, թե ինչ պաշտոնի մասին է խոսքը։
[2] Նամակի առաջին էջի ցածի եզրին։

տացիան։ Հետո ես բարձրանամ ամբիոն և այնքան ծանոթ ու անծանոթ գիտուններին պատասխան գտնեմ, իսկ հետո հոգաբարձուն վերկենա ու ասի՝ «բավական է, պարոն Սունդուկով, շնորհավորում եմ մագիստրոսությունդ...» ահա, մայրիկ ջան, քեզ անունս... այն ժամանակ կասեն. ամբողջ Վրաստանից առաջին հայն էր, որ մագիստրական քննությունը հանձնեց։ Մյուս կողմից էլ մտածում էի. կգնամ հիմա, ո՞վ գիտե, ի՞նչ պաշտոն կտան կամ ի՞նչ հարգանք կունենամ, մինչև... իսկ եթե որպես մագիստրոս գնամ, կասեն՝ սա կրթված մարդ է, սրան այսինչ լավ պաշտոնը տանք, որովհետև այստեղ մագիստրոսներ չունենք։ Մեկ էլ այն, որ մտածում էի, գամ, հանկարծ կուղարկեն Շամախի կամ այդտեղ պետական պաշտոնատանը որևէ տեղ կնշանակեն։ Իսկ եթե այստեղ մնամ, մի կողմից կոմիտետը տեր կլինի, մյուս կողմից՝ համալսարանի պրոֆեսորները արդեն լավ են ճանաչում ինձ, մի խոսքով, այստեղ ավելի շատ հարգանք կունենամ, քան Թբիլիսիում։ Եվ կամ ի՞նչ բան է մի տարին. իբր թե մի կուրսում երկու տարի մնացել եմ. դրա փոխարեն հինգ տարում մագիստրոս դարձած [կգամ] և ոչ թե թեկնածու կամ ուսանող. աստված այս շնորհքը տվել է, ինչո՞ւ չօգտագործեմ։ Իսկապես, մայրիկ ջան, մագիստրոսությունը ամեն մարդու գործ չէ, իսկ ինձ ֆրանսերեն իմանալը շատ է օգնում, որովհետև մագիստրոսության գիտելիքները դեռ ռուսական գրքերում չկան։

Մայրիկ ջան, այսպես շարեցի իմ մտքերը և այս ձևով կառուցեցի դալիքը, ինչպես երեխան խաղաթղթերից տուն կկառուցի։ Բայց, մայրիկ ջան, մարդու մոտ ուղեղի մտորումներին հաջորդում է սրտի ցանկությունը. և երբ սրտում հարց եմ տալիս՝ հապա մայրս... վայրկենաբար մարում են բոլոր խոհերս, ինչպես ամենաթեթև քամին կքանդի խաղաթղթի կառուցվածքը. ձեր անունը, մայրիկ ջան, այնպես է բուժում հիվանդ ուղեղս, ինչպես ուշագնացին՝ սառը ջուրը, ինչպես հարբած մարդը կզգաստանա քաղցր քնից հետո։ Էլի աստված ողորմած է, մայրիկ ջան, հիմա ձեր կրծքին փարվելուց բացի, ոչինչ չեմ ցանկանում։ Ֆրանսերենի քննությունն էլ հանձնեցի, ինչպես գրել եմ, և նրանից էլ հինգ ստացա։ Այժմ, բացի դիսերտացիայից, համալսարանում ուրիշ գործ չունեմ, մի շաբաթում կվերջացնեմ. այստեղ համալսարանի, Կովկասյան Կոմիտեի և Պետական Բանկի միջև գրագրությունների համար շատ ժամանակ է անցնում, թե չէ ձեր արևը [վկա], մայրիկ ջան, հենց այսօր էլ ցանկանում եմ ճանապարհին լինել. երեկ Բուտկովին տեսա ամառանոցում և խնդրեցի, որ շուտ ուղարկեն ինձ, ասաց, որ ինչ բոպեի համալսարանը դրի, ինքը կաշխատի ուղարկել։ Այս ընթացքում, մայրիկ ջան, ես գիտեմ, ինչքան էլ շուտ ուղևորվեմ, մի ամսից շուտ չեմ կարող դուրս գալ։ Իսկ Սողոմոնը ինչ խորհուրդ է տվել ձեզ, թե ինձ փող պետք չէ. մայրիկ ջան, ինչպե՞ս պետք չէ. այստեղի փողը միայն հագուստի ու ճանապարհի համար պետք կգա. բացի դրանից, հարյուրհիսուն ռուբլու անհրաժեշտ գրքեր պետք է բերեմ և մի քիչ էլ պարտք ունեմ. այն պարտքը, որ ձեզ դրել եմ։ Զատկին երեսուն ռուբլի...[1]

Մակագրություն.— Մայրիկ ջան, այս Սողոմոն Զավրիևին կարդացնել կտաք։[2]

Սիրելի իմ Սողոմոն. վերջապես դու էլ հիշեցիր ինձ, բայց միթե՞ երբևէ մոռացել էիր. ճաշտն ասած, ես դրան չեմ կարող հավատալ։ Շնորհակալ եմ քեզանից. շնորհակալ եմ, իմ Սողոմոն, քո նամակի համար։ Դու չգիտես, թե ինչ բարիր արեցիր ինձ. քո բառերը՝ «միթե՞ քեզ ցանկալի չէ տեսնել քո մորը, ինձ» թե ինչ ազդեցություն թողեցին իմ հուզված հոգու վրա, չեմ կարող արտահայտել։ Միտք, սիրտ— սրանք վերջերս իմ մեջ երկու հակառակորդներ են, որոնք հերթով հաղթանակում են ու այդպիսով ծվատում են ինձ։ Ես նամակիս երկրորդ էջումն էի, երբ ստացա քո նամակը. գուցե թե մորս ուղղած նամակը այսպես չվերջացնեի, թեև ես երեկ արդեն կարծես թե որոշեցի անպայման գալ, բայց ինչպես արդեն ասացի, դու ուղարկեցիր ինձ բուժիչ բալասան։ Իրոք, ես համարյա թե հիվանդ էի, բայց այժմ վճռված է. երկու ամսից հետո ես համբուրում եմ քեզ. կարդա մորս հասցեագրված իմ նամակը, եթե համբերություն կբավի և հասկացիր ինձ, Քրիստաֆորին կգրեմ վաղը. քո Գաբրիել։

(Մայրիկ ջան, համոզված եղեք, որ երկու ամսից հետո այդտեղ եմ)։[3]

---

[1] Նամակը թերի է։

[2] Շարունակությունը ուղղված է ընկերոջը՝ Սողոմոնին, ռուսերեն լեզվով, նամակի մի քանի էջերի եզրերին։

[3] Նամակի առաջին էջի վերջում «Իմ հոգի ու միտք մայրիկ ջան» տողի տակ։